ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԼԵՈՆԻԴ ԱԼԲԵՐՏԻ

ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ԶՈՒԳՈՐԴՎԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱՀՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
НАГАПЕТЯН ЛЕОНИД АЛЬБЕРТОВИЧ

УГОЛОВНО ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ВОИНСКИХ ПРЕСТУПЛЕНИЙ СОПРЯЖЕННЫХ С НАСИЛИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - «Уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր **Ա.Ա. Թամազյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ռաշիդյան Ա.Ա.**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի «Հայբուսակ» համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի դեկտեմբերի 9-ին ժ. 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի հոկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвервждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Степанян О.М**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Тамазян А.А.**

Кандидат юридических наук **Рашадян А.А.**

Ведущая организация: **Ереванский «Айбусак» университет**

Защита состоится в 9 декабря 2023 г. 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 27 октября2023 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մեզանում իրականացվող իրավական բարեփոխումները ենթադրում են ի թիվս այլ հիմնահարցերի, արմատական վերափոխումներ իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական կարգապահության ամրապնդման, իրավախախտումների վերացման և զինծառայողների մարտունակության բարձրացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի մարտունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոցը բանակաշինության և զինվորական ծառայության միջավայրում ոչ առողջ մթնոլորտի ու մոտեցումների արմատական փոփոխությունն է:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է նոր քրեական օրենսգիրքը, որը էապես տարբերվում է 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի բովանդակությունից և պարունակում է բազմաթիվ նոր իրավակարգավորումներ, այդ թվում զինվորական հանցագործությունների ոլոտում: Սա նայնպես ենթադրում է նոր գիտական հետազոտությունների և վերլուծությունների իրականացում, որին ձեռնամուխ է սույն հետազոտության հեղինակը:

Թեմայի հետազոտության արդիականությունը նաև նրանում է, որ բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունները ՀՀ զինված ուժերում կատարվող հանցագործությունների կառուցվածքում դրսևորվում են առավել դաժանությամբ, ոտնահարելով ոչ միայն զինվորական ծառայության կարգը, կանոնադրական հարաբերությունները, այլև էական վնաս են հասցնում երկրի անվտանգության համակարգին, բանակի մարտունակությանը, զինվորական կազմի բարոյահոգեբանական մթնոլորտին, հետևաբար դրանց դեմ պայքարին առնչվող ու հրատապ լուծում պահանջող հարցերը բացառիկ կարևոր են:

Բռնությամբ զուգորդված հանցագործությունները, դժբախտաբար, հասարակական կեցության անբաժան մասն է: Դրա ակունքները սկիզբ են առնում մարդկության առաջացմամբ և մշտապես ուղեկցում նրան: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ հանցավորության (այդ թվում զինված ուժերում կատարվող հանցագործությունների) դեմ պայքարը անիմաստ և անարդյունք աշխատանքն է: Հակառակը, անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրել բանակում բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառներն ու պայմանները ինչպես նաև ողջախոհության սահմաններում նվազագույնի հասցնել հանցավորությունը և այն վերահսկելի դարձնել:

ՀՀ Զինված ուժերում բռնությամբ զուգորդված հանցագործությունների բացահայտման, քրեական պատասխանատվության և կանխարգելման հիմնախնդիրները համարվել և շարունակվում են համարվել ՀՀ քրեական իրավունքի, կրիմինալոգիայի և քրեակատարողական իրավունքի գիտության ու պրակտիկայի առաջնային խնդիրներից:

Քննարկվող հիմնախնդրի գիտական հետազոտության արդիականությունը այմանավորված է նաև Հայոց բանակում մարտունակության և կարգապահության բարձրացման անհրաժեշտությամբ, քանզի զինված ուժերում բռնությամբ զուգորդված հանցագործությունները ուղղված են ոչ միայն քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ, այլև խարխլում են պետության անվտանգությունը և երկրի պաշտպանությունը, հետևաբար նմանատիպ զինվորական հանցագործությունների հետ կապված հետազոտություններն ունեն զգալի գործնական-կիրառական նշանակություն:

Հետազոտության թեմայի գիտական ուսումնասիրության վիճակը: Խորհրդային ժամանակաշրջանից սկսած մինչև ներկայիս օրերը բավականին գիտական հետազոտությունների են նվիրվել բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների բացահայտման հիմնախնդիրներին:

Անկախ պետականության և ազգային ինքնուրույն բանակի առկայության պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել զինված ուժերում բռնությամբ զուգորդված հանցագործությունների ծնող պատճառներն ու պայմանները բացահայտելու, դրանք համակողմանի ուսումնասիրելու ուղղությամբ: Այս առումով, ընդգծենք, որ այսպիսի ուսումնասիրությունների հիմքը՝ գործնականում դրվել է պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանի աշխատություններով որոնցում ներկայացվում են զինվորական հանցագործությունների հասկացությունը, էությունը, առանձնահատկությունները, դասակարգումը և դրանց կանխարգելման հարցերը[1]: Այսուհետև գրվեցին թեկնածուական ատենախոսություններ [2] ընդհանրապես զինվորական հանցագործությունների վերաբերյալ:

Հետազոտվող թեման առավել խորությամբ և համակողմանի ուսումնասիրվել է նաև ռուս գիտնականների՝ Յու. Մ.Անտոնյանի, Ռ.Ա. Բազարովի, Լ.Գ. Գաուխմանի, Վ.Ն.Բուրլակովի և այլոց կողմից:

---

[1] Տե՛ս **Аветисян С.С.** Воинское преступления: теория и практика: Монография, Ереван, Исд-во “Зангак”, 2001, 216 с

[2] Տե՛ս, օրինակ **Սեդրակյան Ա.Ս.** Զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագիրը: Ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի համար: Երևան, 2007, 192 էջ:

Նշված գիտնականների աշխատությունները զգալի ներդրում են քրեական իրավունքի գիտության զարգացման և քննարկվող հիմնախնդրի ուսումնասիրության բնագավառում:

Հետևաբար հավուր պատշաճի արժևորելով այդ ամենը, այդուհանդերձ ընդգծենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգիրքը ընդունելուց հետո, քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ մենագրական մակարդակով աշխատանք չի կատարվել:Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքը՝ իր առջև դրված խնդիրների բազմազանությամբ և ծավալով, կոչված է մասամբ լրացնել առկա բացը և հասարակական պահանջը, ինչպես նաև բացահայտել նոր քրեական օրենսգրքում ամրագրված համապատասխան հանցակազմերի բովանդակությունը, դրանք համեմատելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հետ, մշակել առաջարկություններ նոր օրենսդրական կարգավորումների և գործող նախադեպերի ճշգրտման առումով:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է՝ համակարգված վերլուծության ենթարկել բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական ասպեկտները, ինչպես նաև այդ հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները:

Դրված նպատակին հասնելու համար փորձ է արվում լուծել հետևյալ խնդիրները.

-բացահայտել բռնության հասկացությունը և էությունը՝ ինչպես մասնագիտական գրականության տեսանկյունից, այնպես էլ նոր քրեական օրենսդրության առումով.

- վերլուծել բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագրական հատկանիշները.

-բացահայտել բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների պատճառներն ու պայմանները,

- վերլուծել նմանատիպ հանցավոր արարք կատարած զինծառայողի կրիմինալոգիական պատկերը և բացահայտել նրա բնութագրական հատկանիշները,

- մշակել գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված կոնկրետ առաջարկություններ՝ ՀՀ զինված ուժերում բռնությամբ զուգորդված հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ (հակազդեցության կանխարգելիչ միջոցների համալիր) և գործող քրեական օրեսդրության և դատական պրակտիկայի դրույթների ճշգրտման առումով:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Սույն հետազոտության օբյեկտն է ժամկետային (պարտադիր, պայմանագրային), պահեստազորային և

զորահավաքային ծառայության ժամանակ բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունները:

Հետազոտության առարկան է բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական ասպեկտների, ինչպես նաև կանխարգելման հետ կապված հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. Սույն հետազոտության ընդհանուր մեթոդաբանության հիմքն է սոցիալական գոյի ճանաչման համագիտական դիալեկտիկական մեթոդը, որը դիտարկում է սոցիալական երևույթներն ու գործընթացները մշտական զարգացման և փոխկապվածության մեջ:

Բացի դրանից հետազոտության լիարժեքության, օբյեկտիվության և արժանահավատության ապահովման նպատակով, օգտագործվել են նաև գիտական ճանաչման ընդհանուր և հատուկ մեթոդներ, տրամաբանական հնարքները ու եղանակները, իրավաբանական վերլուծության, իրավահամեմատական, համակարգային-կառուցվածքային և վիճակագրական վերլուծության մեթոդները:

Բացի դրանից, սույն հետազոտության ընթացքում համադրվել են միջգիտակարգային մոտեցումներ, և ձևավորվել է համալիր մեթոդաբանություն, որն արտացոլում է խնդրի իրավական, մշակութային, սոցիալական և հոգեբանական ասպեկտները:

Հետազոտության տեսական հենքը. Սույն հետազոտության համար որպես տեսական հենք է ծառայել քրեական իրավունքի և կրիմինալոգիայի բնագավառում հայ և ռուս գիտնականներ՝ Ս.Ս. Ավետիսյանի, Ա.Ն. Գաբուզյանի,Ս.Շ. Ծաղիկյանի, Ա.Ս. Սեդրակյանի, Դ.Ռ. Հունանյանի, Յու. Մ. Անտոնյանի, Վ.Ն. Կուդրավցևի, Խ.Մ. Ախմետիշինի, Ֆ.Ս. Բրաժնիկի, Դ.Վ. Վեդինինի, Վ.Կ. Գլիստինի, Օ.Կ. Զատելեպինի, Վ. Պ. Զիմինի, Ա.Վ.Իշենկոյի, Ս.Պ.Կոչեշևայի, Ի.Մ. Մացկևիչի, Վ.Վ. Մինսկայայի, Ա.Վ. Նաումովի, Գ.Պ. Նովոսելովի, Ե.Վ. Պրոկոպովիչի, Ա.Տ. Սապրոնովի, Ի.Ի. Սլուցկիի, Է.Ս. Տենչովի, Ա.Ա. Տեր-Ակոպովի, Ա.Տ. Ուկոլովի, Վ.Պ. Շուպլենկովի, Վ.Է. Էմինովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ և փորձարարական (էմպիրիկ) հիմքերը. Սույն հետազոտության համար որպես նորմաընտիվ հիմք են հանդիսացել՝ ՀՀ Սահմանադրությունը, 2003 և 2021 թվականների ՀՀ քրեական օրենսգրքերը, Զինվորական կանոնագրքերը և գործող օրենսդրությունը:

Որպես էմպիրիկ հիմք օգտագործվել են ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և իրավապահման մարմինների իրավակիրառ նյութերը, վիճակագրական տվյալները:

Հետազոտության գիտական նորույթը. Սույն հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ ՀՀ նոր քրեական օրենսգիքի, դատական և իրավակիրառ պրատիկայի նյութերի հիման վրա, հեղինակը համակարգված վերլուծության է ենթարկել բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագրական առանձնահատկությունները:

Հետազոտության մեջ առաջադրված տեսական ու կիրառական խնդիրներին համարժեք լուծումներ է տրված: Մասնավորապես՝ բացահայտվել են բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների քրեաիրավական բնույթը, դրա սոցիալական և մարդկային առումները, համակողմանի վերլուծության են ենթարկվել ՀՀ նոր քրեական օրենսգրքի համապատասխան նորմերը, դատական նախադեպերի դրույթները և իրավական դիրքորոշումները և վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել են դրանց ճշգրտման վերաբերյալ տեսական հիմնավորումներ ու գործնական առաջարկություններ: Համակողմանի վերլուծվել են բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների վիճակը, կառուցվածքը և դինամիկան (շարժընթացը) բնութագրող պաշտոնական վիճակագրական տվյալները բացահայտվել է հանցավորի կրիմինալոգիական բնութագրական առանձնահատկությունները, ինչպես նաև կոնկրետ առաջարկություններով նախանշվել են նշված հանցագործությունների արդյունավետ կանխարգելման հիմնական ուղղությունները:

Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային այն մոտեցումը, ըստ որի բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների կատարման պատճառների, դրդապատճառների ուղղակի կամ անուղղակի փոխկապվածությունը ողջ Հանրապետությունում բռնությամբ զուգորդված այլ հանցագործությունների ընդհանուր քրեածին պայմանների հետ:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.

1.Բռնությունն ամենաընդհանուր կերպով կարելի է ձևակերպել որպես ինչ-որ մեկի հանդեպ հարկադրական ներգործություն, որն ազդում է անձի ֆիզիկական լիարժեքության և /կամ/ արժանապատվության (հոգե-բարոյական լիարժեքության) վրա: Բռնության հայտնի տեսակներից են ֆիզիկականը (ներառյալ՝ սեռականը), հոգեբանականը և տնտեսականը կամ կառուցվածքայինը:Կարևոր է հաշվի առնել, որ հոգեբանական բռնությունը չի կարելի համարել բռնության ավելի թեթև, տեսակ, քան ֆիզիկականը: Եթե նույնիսկ առաջինը կարող է արտաքին տեսանելի հետևանքներ չթողնել, այն ազդում է բռնության ենթարկվածի հոգե-բարոյական

նկարագրի վրա՝ աղավաղելով այն: Դա կարող է հանգեցնել անհատի կարողությունների «ոչ լիարժեք» դրսևորմանը ինչպես մարտի դաշտում և ծառայության ընթացքում, այնպես էլ ոչ զինվորական կյանքում՝ հանգեցնելով «հասարակության ոչ լիարժեք անդամի» զգացողության:

2.Քրեական իրավունքի տեսությունում, գործող քրեական օրենսդրությունում և դատական ու իրավակիրառ պրակտիկայում «բռնության» եզրույթի վերաբերյալ առկա մոտեցումները, ընդհանուր առմամբ, կարելի է դասակարգել երկու խմբի՝ լայն ու նեղ».

«Լայն» առումով՝ «բռնության» բովանդակության առումով հասկացվում է ոչ միայն բուն ֆիզիկական ուժի գործադրումը, այլև հարկադրանքի ցանկացած տեսակի (օրինակ՝ հոգեկան, դաստիարակչական և այլն) կիրառումը:

«Նեղ» առումով՝ «բռնությունը» զուտ ֆիզիկական ուժի գործադրմամբ կատարված հանցագործություն է (այս ուղղությամբ է գնացել ՀՀ նոր քրեական օրենսգիրքը՝ հոդ. 3, 9-րդ կետ):

3.«Բռնությունը» ըստ հեղինակի՝ ոչ միայն զուտ ֆիզիկական ուժի գործադրումն է հանցագործություն կատարելու ընթացքում, այլև դրա ռեալ սպառնալիքը և այն ֆիզիկական, բարոյահոգեբանական ներգործության անմիջական հետևանքով առաջացած խեղումները և զրկանքները, որոնք տառապանք են պատճառել անձի առողջությանը և հոգեկան աշխարհին: Այսինքն՝ բացասական հետևանքները առողջության և հոգեկանի վրա պետք է իրական լինեն՝ պատճառահետևանքային կապով:

4.ՀՀ նոր քրեական օրենսգրքում ամրագրված «բռնություն» հասկացությունը, ինչպես նշվեց, շատ նեղ մոտեցում է հենց նշված օրենսգիքի մի շարք դրույթների մեկնաբանությունից ելնելով (օրինակ՝ «հոգեկան հարկադրանք» (հոդ. 35,) «դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց» (հոդ. 104) 7 և այլն:

Այս կապակցությամբ՝ հեղինակն առաջարկում է ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ. «Բռնությունը ոչ միայն մարդու նկատմամբ և նրա կամքին հակառակ դիտավորյալ ֆիզիկական ուժի գործադրումն է, այլ նաև այնպիսի հարկադրանքի (հոգեկան, դաստիարակչական բնույթի) գործադրում է, ինչի հետևանքով անձին առողջությանը պատճառվում է ֆիզիկական կամ այլ բնույթի վնաս»:

5.Հանցագործությունը համարվում է բռնությամբ զուգորդված, եթե կատարողը ուրիշի (տուժողի) նկատմամաբ վերջինիս կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով, դիտավորությամբ ֆիզիկական կամ հոգեկան ներգործությամբ տուժողի կյանքին, առողջական մարմնական կամ հոգեբանական վնաս է պատճառում:

6.Բռնության (ֆիզիկական կամ հոգեկան) սպառնալիքը նույնպես դասվում է բռնությամբ զուգորդված հանցագործության, եթե այն ողջամտության (ողջախոհության) տեսանկյունից իրական է և այլ մեկնաբանությունների տեղիք չի տալիս:

7.«Բռնություն»,«հարկադրանք» և «հանցագործություն» եզրույթները որքան հարակից են, նույնքան էլ տարբեր են իրենց իմաստով ու բովանդակությամբ, քանի որ թվարկած եզրույթները ոչ բոլոր դեպքերում են համարվում հանցավոր արարք, այսինքն՝ պարունակում են որևէ հանցակազմով նախատեսված հատկանիշները: Հետևաբար, բռնությամբ զուգորդված արարքը կարող է համարվել հանցավոր, եթե այն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենսգիքի հատուկ մասով որևէ հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի հատկանիշները: Եվ ամենակարևորը՝ բռնությամբ զուգորդված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը դրսևորվում է առավել ագրեսիվ վարքագծով՝ ոչ միայն հակահիրավական առումով, այլև բարոյահոգեբանական տեսանկյունից:

8.Հոգեբանական բռնությունը՝ բռնություն է մարդու կողմից մարդու հանդեպ, որը ֆիզիկական չէ, սակայն խոսքով կամ վարքով խոցում է մարդու հոգեբանական ամբողջականությունը և/կամ արժանապատվությունը: Բանն այն է, որ խոցված արժանապատվությամբ և./կամ խոցված հոգեբանական ամբողջականությամբ մարդը հետագայում դրևորում է այնպիսի վարք, որը բացասաբար է ազդում մարդկային հասարակության համակեցության վրա: Նա կարող է չդառնալ հասարակության լիիրավ և. հաջողակ անդամ, կամ ինքն էլ կարող է դառնալ բռնարար: Մարդը բարձրագույն արժեքներից է, և. նրա ֆիզիկական ու հոգեբանական ամբողջականությունը, ներառյալ արժանապատվությունը, պիտի պաշտպանվի և պահպանվի հասարակության կողմից:

9.Բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների վերլուծությունից հետևում է, որ դրանց հիմնական օբյեկտը կանոնագրքային փոխհարաբերությունների կարգն է, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ կարող է հանդիսանալ զինծառայողների կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը: Սակայն երկօբյեկտ հանցակազմերի առանձնա-հատկությունները հաշվի առնելով, կարելի է ենթադրել, որ նշված հանցակազմների հիմնական օբյեկտին վնաս հասցնելը հնարավոր է նաև լրացուցիչ օբյեկտի՝ տվյալ դեպքում տուժողի առողջությանը, պատվին ու արժանապատվությանը վնաս հասցնելու միջոցով:

Հետևաբար, զինծառայողի կողմից մեկ այլ զինծառայողին ծաղրուծանակի ենթարկելը, հալածելը, ծեծելը կամ այլ բռնի գործողությունները կատարելը կարող է

որակվել բռնությամբ զուգորդված հանցագործություն միայն այն դեպքում, երբ ոտնձգում է զինվորական ծառայությունը կրելու համար սահմանված կարգի դեմ և անմիջականորեն կապված է զինվորական գործունեության հետ:

10.Բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների զինվորական հանցագործությիունների պատճառա-հետևանքային համալիրը անքակտելի կապված է հասարակության կյանքի ժամանակակից պայմանների հետ, ածանցյալ է հանցավորության ընդհանուր պատճառներից և պայմաններից ու ամփոփվում է ժամանակակից Հայաստանում զինծառայողների կողմից հանցագործությունների իրականացման պատճառների և պայմանների, զինծառայողների դևիանտ (շեղված) վարքագծի, նրանց փոխհարաբերությունների, որպես անձի հատկանիշ ագրեսիվ վարքագծի արտահայտումների վրա սոցիալ-բացասական երևույթների փոխգործունեության և ազդեցության մեջ:

11. Զինծառայողների միջանձնական փոխհարաբերությունների ոլորտում բռնությամբ զուգորդված հանցագործությունների դեմ պայքարի, զինված ուժերում հանցավորության կանխարգելման միջոցների համակարգը ներառում է մասնավոր և ընդհանուր կանխարգելման միջոցառումները, որոնք ենթադրում են ժամանակին բացահայտել այն բացասական երևույթները, հակականոնադրական հարաբերությունները, որոնք նպաստում են զինծառայողների մոտ ագրեսիվ վարքագծի (պայմանական արտահայտված՝ շեղված վարքագծի) ձևավորմանը և սրանից բխող վտանգավոր հետևանքների առաջացմանը, որոնք անմիջականորեն ազդում են զինված ուժերում ծառայողների մարտունակության և բարոյահոգեբանական պատշաճ կեցվածքի և դրսևորվող վարքագծի վրա:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը.նրանում է, որ ստացված արդյունքնդրը, առաջարկությունները, հետևություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության ճշգրտման և դատական պրակտիկայի բարելավման, ՀՀ զինված ուժերում հանցավորության կանխարգելման, ինչպես նաև գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ քրեական իրավունք և կրիմինալոգիա դասընթացների ուսումնառության ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Ատենախոսական աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ անցկացվել է աշխատանքի նախնական քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի չորս մենագրությունում և հինգ գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ԲՈԿ-ի կողմից հաստատված ամսագրերում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Բռնության» վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները քրեական իրավունքի տեսությունում և գործող օրենսդրության մեջ»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Բռնության» հասկացության տեսական մոտեցումները»** վերնագրով բացահայտվում է բռնության էությունը և դրա վտանգավորությունը ողջ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի համար:

«Բռնությունն» իր էությամբ ու բովանդակությամբ դասվում է սոցիալական ամենավտանգավոր ու ագրեսիվ երևույթների շարքին: Հետևաբար բռնությունը արդի դարաշրջանի (և ոչ միայն) և հայ հասարակության դեմ ծառացած մարտահրավերներից է: Սակայն բռնությունը նաև սոցիալական գոյի անբաժան ուղեկիցն է: Բռնությունը վաղուց ի վեր ներթափանցել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները և առաջին հերթին՝ քրեական մշակույթի տիրույթ: Տեսությունում հանցագործությունների քրեագիտական դասակարգման մեջ բռնությամբ զուգորդված հանցագործությունների առանձնացումը պայմանավորված է այդ արարքների պատճառների, շարժառիթների, եղանակների ու իրադարձությունների, հացավոր անձանց բարոյահոգեբանական ագրեսիվ բնութագրի հետ: Որքանով որ նշված առանձնահատկությունները պայմանավորում են բռնությամբ զուգորդված հանցագործությունների քրեաիրավական բնույթի, կառուցվածքի, շարժընթացի յուրահատկությունը, անհատական վարքի մեխանիզմը իրենցից ներկայացնում են առավել հանրային վտանգավորության դրսևորումներ, ապա դրանց դեմ պայքարի մարտավարությունը և ռազմավարությունը, բացի իրավական և կազմակերպչական միջոցառումներից, պետք է հիմնավորված լինի նաև գիտականորեն հիմնավրված մոտեցումներից ու հայեցակարգերից: Այդպիսի հանցագործության հիմնական բնութագրական հատկանիշը՝ բռնությունն է անձի նկատմամբ, որպես հանցավոր նպատակին հասնելու միջոց, որը նկատի ունի տուժողին ֆիզիկական վնաս և հոգեկան տառապանք պատճառելը:

Բռնությունը, որպես արարքի հիմնական տարր, հավասարապես բնորոշ է կյանքի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործություններին, դիտավորյալ առողջությանը վնաս պատճառելը, խոշտանգումներին, բռնաբարությանը, ավազակությանը, ինչպես նաև բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործություններին: Նշված բոլոր դեպքերում հանցավոր վարքագծի մեխանիզմը կապված է ագրեսիվ-արհամարական վերաբերմունքի հետ՝ դեպի անձը (տուժողը), նրա առողջությունը և անձեռնմխելիությունը: Բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունները քննարկվող խմբին դասելը պայմանավորված է հանրային առավել վտանգավորության եզրույթով և դրանց դրսևորման առանձնահատկություններով:

Բռնությամբ զուգորդված հանցագործությունները՝ հանցավորության ընդհանուր համայնապատկերում դասվում են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, քանզի այն կապված է ծանր, իսկ առանձին դեպքերում, անդառնալի հետևանքների հետ: Բռնությամբ զուգորդված հանացագործությունները ոչ միայն էական (երբեմն՝ անուղղելի) վնաս են հասցնում տուժողին և նրա հարազատներին, այլև խաթարում են հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բնականոն կյանքը, տագնապ են առաջացանում բնակչության մեջ, իսկ զինված ուժերում վնաս են հասցնում բանակի մարտունակությանը և զինվորական կարգապակությանը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Բռնության ընկալումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ**» վերնագրով հեղինակը վերլուծության է ենթարկել բռնության դրսևորումները գործող օրենսդրության մեջ: Որպես կանոն, կատեգորալ հասկացությունները, քիչ բացառությամբ չեն ամրագրվում օրենսգրքերում, այդ թվում քրեական օրենսգրքերում:Այդպես էր 2003 թվականի քրեական օրենսգիրքը, որում տրված չէր «բռնություն» եզրույթի հասկացությունը: Սակայն նոր քրեական օրենսգրքի (2021թ.) հատուկ մասում «բռնություն» կատեգորիան նախատեսված է ավելի քան 50 հանցակազմերում:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը տալիս է բռնության եզրույթի օրենսդրական ձևակերպումը. «բռնություն»՝ այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կյանքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը» (ՀՀ քր.օր.-ի 3-րդ հոդ., 9-րդ կետ):

Մեր կարծիքով այստեղ տրված է «բռնության» նեղ սահմանումը, որը փաստացի չի համապատասխանում նույն քրեական օրենսգրքի հատուկ մասի բովանդակությանը, որտեղ տրված են «բռնության» այլ ձևակերպումներ: Օրինակ՝

«ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք» (հոդ. 35),« հոգեկան ներգործություն» (194 հոդ.), «ֆիզիակական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» (հոդ. 162, 196), «սպառնալիքի, դաժան վերոբերմունքի կամ արժանապատվությունը նվաստացնելու եղանակ» (հոդ.162), «հոգեկան ներգործության» (հոդ. 194), «ֆիզիկական ներգործություն» (հոդ.195), «ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» (հոդ. 196), «հարկադրելը» (հոդ.199),«դաժան վերաբերմունք» (հոդ.307), «բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը» (հոդ.330), «բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով»(հոդ.418), «ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը», «բռնի անհետացումը» (հոդ.451), «հրամանը չկատարելը» (հոդ.516), «պետին դիմադրելը» (հոդ.518), «բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը» (հոդ.519,520),«սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով»(հոդ.523),«զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը» (հոդ.524):

Մեր կարծիքով վերոնշված բառակապակցությունները, որոնք ամրագրված են 2021 թվականի ՀՀ նոր քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներում, իրենց իմաստով ու բովանդակությամբ պարունակում են «բռնության» հատկանիշներ, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի հոդ.3-րդ կետի բովանդակությունը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի վերոնշված (և չվերոնշված) դրույթներին, այսինքն՝ «բռնության» նեղ հասկացությունը հակասում է լայն հասկացությանը, ինչը էական դժվարություններ կառաջացնի և առաջացնում է իրավակիրառողների համար, հատկապես՝ հանցավոր արարքի ճիշտ որակման պարագայում:

Մեր կարծիքով նշված հակասությունը կարելի է լուծել օրենսդրական փոփոխություններ կատարելու ճանապարհով: Համադրելով և ընդհանրացնելով ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասից բերված բառաքաղը (բառակապակցությունները) առաջարկում ենք «բռնության» հետևյալ սահմանումը.«բռնությունը» ֆիզիկական ուժի կամ դրա իրական սպառնալիքի, կամ հոգեկան ներգործության գործադրման պատճառով անձի (տուժողի) մոտ առաջացած անբարենպաստ (հաճախ անդառնալի) հետևանքներն են (ֆիզիկական կամ հոգեկան)»: Սա, մեր կարծիքով, «բռնության» լայն սահմանումներից մեկն է, որը ներառում 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում

ամրագրված բռնության զուգորդված հանցակազմերը, որոնք դասվում են «ծանր» կամ «առանձնապես ծանր» հանցագործությունների շարքին:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «**Բռնությամբ զուգորդված հանցագործությունների քրեաիրավական բնութագրական առանձնահատկությունները**» վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Բռնությամբ զուգորդված հանցագործությունների հասկացությունը, էությունը և դասակարգման հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը բացահայտում է նշված հանցագործությունների հասկացությունը, էությունը, բովանդակային առանձնահատկությունները և դասակարգման հիմնախնդիրները:

Զինվորական հանցագործությունների շարքը զետեղված էին 2003 թվականի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում և զետեղված են 2021 թվականին մայիսի 5 -ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ բաժնում: Նշված բաժնի 46-րդ գլխում զետեղված է «Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնակարգային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները»: Հենց այս գլխում է արձանագրված բռնությամբ զուգորդված մի շարք զինվորական հանցագործությունները, օրինակ՝ «Հրաման չկատարելը» (516հոդ.), «Հրամանատարին (պետին) դիմադրելը կան նրա պարտականությունների իրականացումը խոչընդոտելը» (518 հոդ.), «Հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կա բռնություն գործադրելու սպառնալիքը» (519 հոդ.), «Ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը» (520 հոդ.), «Զինծառոյողների փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում» (521 հոդ.), «Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը» (522 հոդ.), «Զինծառոյողին ինքնասպանության հասցնելը» (523 հոդ.), «Զինծառայողին վիրավորանք հասցնելը» (524 հոդ.), այսինքն՝ այս գլխում պարունակվում է բռնությամբ զուգորդված ութ հանցակազմ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս գլխում նախանշված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են, դրանք քրեական օրենսգրքով պաշտպանվող այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի:

Զինված ուժերում բռնությամբ զուգորդված զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վտանգավորության աստիճանը առավել բարձր է, քանի որ

դրանք ուղղված են ոչ միայն անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի, այլև բանակի մարտունակության և, վերջին հաշվով՝ պետության անվտանգության դեմ:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 46-րդ գլխում սահմանված հանցակազմերը՝ ըստ բռնության աստիճանի պայմանականորեն կարելի է դասել երկու խմբի.
ա) նեղ առումով՝ բռնության զուգորդված զինվորական հանցագործություններ (հոդվածներ՝ 519,520,522,523), որոնցում օրենսդիրը ակներև ցուցում է «բռնություն», «դաժան վերաբերմունք» հասկացությունները և այդ եղանակով կատարվող հանցավոր արարքները: Սրանք դասվում են նաև «ծանր» կամ «առանձնապես ծանր» հանցանքների խմբին (հոդ. 17-րդ, 4-րդ և 5-րդ կետեր): բ) լայն առումով՝ հրաման չկատարելը (516 հոդ.), հրամանատարին (պետին) դիմադրելը կամ նրա պարտականությունների իրականացումը խոչընդոտելը (518 հոդ.), «Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում» (521 հոդ.) նույնպես դասվում են բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների շարքին, քանի որ դրանք կատարվում են բռնության այս կամ այն եղանակով, օրինակ՝ «Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման էյամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին»(516 հոդ.): Ինչպես տեսնում ենք, նշված հոդվածի դիսպոզիցիայում բացակայում է «բռնություն» եզրույթը, սակայն արարքն իր էությամբ, իմաստով ու բովանդակությամբ բռնության, դիմադրության, կանոնակարգային հարաբերությունների ճկատարման կոպտագույն վարքագծի դրսևորում է, ինչի հետանքով առաջացնում է ծանր հետևանքներ այլ զինծառայողների առողջությանը, ռազմական գույքին, ծառայության շահերին: Նույն տրամաբանությամբ կարելի է ասել 518 և 521 հոդվածների դիսպոզիցիայի բովանդակության վերաբերյալ:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Բռնությամբ զուգորդված առանձին զինվորական հանցագործությունների բնութագրական առանձնահատկությունները»** վերնագրով, հանգամանորեն և համակողմանի վերլուծության են ենթարկվել բռնությամբ զուգորդված առանձին զինվորական հանցագործությունների հոդվածներ (516,518,519,520,521,522,523) առանձնահատկությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Բռնությամբ զուգորդված զինվորական հանցագործությունների կրիմինալոգիական տեսանկյունները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Բռնությամբ հանցանք կատարած զինծառայողների քրեագիտական և սոցիալ-հոգեբանական ասպեկտները»** վերնագրով, համակողմանի վերլուծության են ենթարկվել զինծառայողների քրեագիտական (կրիմինալոգիական) և սոոցիալ-հոգեբանական տեսանկյունները: Բռնությամբ հանցանք կատարած զինծառայողի (անձի) շեղված ամենավտանգավոր դրսևորումն է, որը էական վնաս է հասցնում բանակի մարտունակությանը, և զինվորական կարգապահությանը և զինծառայողների կանոնադրական հարաբերություններին:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառներն ու պայմանները ՀՀ զինված ուժերում»** վերնագրով, բացահայտվում է բանակում բռնությամբ կատարված հանցագործությունների պատճառները և դրանց նպաստող պայմանները, հանցավոր զինծառայողի անձի քրեագիտական բնութագրական հատկանիշները:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Զինվորական հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը բացահայտում է կանխարգեման էությունը, նպատակը և հիմնական ուղղությունները: Ընդհանրապես, հանցավորության կանխման սոցիալական արժեքավորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այն համարվում է հանցագործությունների դեմ պայքարի առավել արդյունավետ ուղղություններից, նախ և առաջ այն պատճառով, որ կոչված է ապահովելու հանցավորության արմատների և աղբյուրների, պատճառների և պայմանների բացահայտումն ու վերացումը (չեզոքացումը, ուղեփակումը): Այլ կերպ ասած, կանխումը, որպես կանոն, ենթադրում է հանցավոր արարքների կատարման հնարավորության բացառում: Դրա հետ մեկտեղ կանխարգելիչ միջոցների արդյունավետ կիրառումը հնավորություն է ընձեռում խափանել նախապատրաստվող կամ արդեն իսկ սկսված հանցավոր գործունեությունը, բացառել օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին վնաս պատճառելու հնարավորությունը:

Եզրակացություն

1. ՀՀ Զինված ուժերում հանցավորությունը ներկայիս պայմաններում որակապես նոր բնույթ է ստացել, քանի որ բնութագրվում է ինչպես հանցավոր տարբեր դրսևորումների ընդլայնվող մասշտաբներով, այնպես էլ սոցիալ-տնտեսական նոր պայմանների, հասարակության բարդ ու հակասական կենսագործունեության, մարդկանց իրավունքների և ազատությունների վրա դրանց կործանարար ազդեցությամբ:

2. Վերջին տարիներին անցումային շրջանին բնորոշ գրեթե բոլոր բարդությունները կրող նորանկախ Հայաստանի Հանրապետությունում զինվորական հանցավորության ցուցանիշները բավականին անբարենպաստ են: Ներկայումս հանցավորությունը դարձել է երկրի ազգային անվտանգության իրական սպառնալիք և արդարացիորեն հասարակական կարծիքի կողմից գնահատվում է որպես հրատապ լուծում պահանջող ամենամտահոգիչ խնդիրներից մեկը:

3. Հեղինակի կողմից իրականացված կրիմինալոգիական հետազոտությունների արդյունքում բացահայտվել են բացասական այս երևույթի հետևյալ հիմնական միտումները: Կրիմինալոգիական իրադրությունը Զինված ուժերում, նրա առանձին ստորաբաժանումների տարբեր խմբերում անընդհատ փոփոխությունների է ենթարկվում: Ստացված տվյալների ամփոփումն ու վերլուծությունը վկայում է նաև հանցավոր տարբեր դրսևորումների լատենտայնացման մասին: Առավել մտահոգիչ է նշված ժամանակաշրջանում Զինված ուժերում արձանագրված կանոնագրքային հարաբերությունների խախտման մոտիվացիայի գերակայությունը հանցավորության կառուցվածքում, որը ժամանակ առ ժամանակ զուգորդվում է բռնությամբ կատարվող հանցագործությունների որակական և քանակական ցուցանիշների պոռթկումներով:

4. Բռնության դեպքերը բանակում, հասարակության մշակույթով պայմանավորված, ներթափանցում են բանակային կյանք, այստեղ ուժգնանալով՝ որպես «ժառանգություն» անցնում հասարակական կյանք՝ այդպիսով պայմանավորելով մի

շարք հանգամանքներ, ա) բանակի պակաս արդյունավետությունը համեմատած այն իրավիճակի հետ, եթե բռնության այս տեսակները «մշակույթ» չհանդիսանային,

բ) հասարակական կյանքի հավելյալ հակվածությունը դեպի բռնության տարրեր պարունակող հարաբերություններ և այդպիսով՝ հասարակության լիարժեք և լիիրավ, ազատ ու չճնշված անդամների փոխհարաբերություններն ու երկրի զարգացման տեմպերի դանդաղումը:

5. Բռնության (ֆիզիկական թե հոգեբանական) բացառման վրա է հիմնված Մարդու իրավունքների համաշխարհային հարացույցը: «Բռնություն» հասկացության ներմուծումն այդ հարացույցը ընդլայնում է մարդու իրավունքների համար պայքարի ներկապանակը, քանի որ բռնությունը բացառելուն ուղղված քաղաքականությունները հասցեագրում են ոչ միայն պետության կողմից մարդու հանդեպ կիրառված չարդարացվող բռնությունը, այլև, վերը նշված տարբերակները՝ պետությունից պահանջելով ազդել մարդկանց և. հասարակությունների, ինչպես նաև. վարքային մշակույթների վրա, որպեսզի այդ դեպքերը վերանան: Այսպիսով՝ պետության վրա դրվում է ոչ միայն ուղղակի պատասխանատվություն՝ չկիրառել այնպիսի բռնություն, որն անհնար է արդարացնել, այլև, ռազմավարական հեռակա պատասխանատվություն՝ իր ինստիտուցիաներով ազդելու հասարակության վարքային մշակույթի վրա այնպես, որ բռնության մշակույթը եթե չվերանա էլ, ապա հնարավորինս նվազագույն հասցվի:

6.Այս ուղղությամբ անհրաժեշտ է մշակել և իրագործել ՀՀ Զինված ուժերում հանցավորության դեմ պայքարի հստակ քաղաքականություն, որը կոչված կլինի ապահովելու տվյալ բացասական երևույթի առավելապես հնարավոր սահմանափակումը, դրա ցուցանիշների մոտեցումն այնպիսի մակարդակի, երբ այն կդադարի ազգային անվտանգությանը սպառնացող իրական վտանգ լինելուց: Նշված քաղաքականության հիմնական նպատակը այն պետք է լինի, որ անցումային շրջանում հանցավորության դեմ պայքարի պայմանների բարելավման, օրենսդրության կատարելագործման, հասարակության լայն շրջանակների

ներգրավման, հանցագործությունների կանխման և բացահայտման պատշաճ կազմակերպման ու իրագործման միջոցով հնարավոր լինի ակտիվ և հետևողական հակազդեցություն ցուցաբերել հանցավորությանը և բարենպաստ փոփոխությունների ենթարկել երկրում ստեղծված կրիմինալոգիական իրադրությունը: Տվյալ նպատակի իրագործմանը, ըստ մեզ, կարող են նպաստել հետևյալ միջոցառումները, որոնք պետք է ուղղված լինեն՝

-հանցավոր բռնության տարածման կանխարգելմանը,

-զենքի, զինամթերքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության սահմանափակմանը,

-հարբեցողության,ալկոհոլամոլության,մարմնավաճառության, ափառաշրջիկության, մուրացկանության և հանցավորության այլ երևույթների դեմ պայքարի ուժեղացմանն ու արդյունավետության բարձրացմանը,

-զինծառայողների կենսապայմանների էական բարելավմանը, կանոնագրքային հարաբերությունների խստիվ պահպանմանը:

7. Զինվոր-զինվոր հարաբերություններում հանդիպող բռնության հիմնական տեսակները նույնն են, ինչ զինվոր-սպա հարաբերություններում՝ ֆիզիկական բռնություն և հալածանք: Այս դեպքում, սակայն, տարբեր են դրդապատճառները:

Ֆիզիկական բռնության հիմնական դրդապատճառը ինքնահաստատվելու ձգտումն է: Այս կերպ զինծառայողները փորձում են բանակային հարաբերությունների համակարգում զբաղեցնել առավել արտոնյալ կարգավիճակ:

Այսպիսով՝ զինվոր-զինվոր հարաբերություններում բռնությունը տարբեր դրդապատճառներ ունի: Զինծառայողն իր ծառայության ընթացքում կարող է կատարել այնպիսի արարք, որը ընդունելի չէ տվյալ միջավայրի կողմից, և այդ արարքից հետո դառնալ հալածանքի թիրախ: Նման դեպքերից են գողությունը, թաքուն ուտելը, հիգիենայի կանոններին չհետևելը և այլն:

8. Ենթադրվում է, որ Զինված ուժերում հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը նպատակահարմար է իրագործել իրար հաջորդող երկու

փուլով: Մասնավորապես, դրանցից առաջինի ընթացքում (այն կարող է ընդգրկել 5-10 տարի) անհրաժեշտ է լուծել երկրում առկա կրիմինալոգիական իրադրության հաստատուն կայունացման խնդիրը: Այնուհետև, երկրորդ փուլի իրագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հանցավոր լարվածության թուլացումը, ինչպես գրանցված, այնպես էլ իրական հանցավորության մակարդակի նվազեցումը, դրա առավել վտանգավոր դրսևորումների արդյունավետ կանխումը, հանցավոր ոտնձգություններով պատճառվող վնասակար հետևանքների էական պակասեցումը և այլն:

9. Զինվորական հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրականացվող քաղաքականությունը պետք է հիմնվի սերտորեն փոխկապակցված հիմնարար սկզբունքների և պահանջների համակարգի վրա, որոնք պայմանավորում են և որոնց վրա պետք է հիմնվեն տվյալ ոլորտում պետական իշխանության բոլոր թևերի, իրավապահ մարմինների և հասարակության գործունեության ու համագործակցության հիմնական խնդիրները և ուղղությունները, այսինքն՝ նշված պայքարի կազմակերպումը, իրագործման մարտավարությունն ու ռազմավարությունը պետք է հարմարեցվեն անցումային շրջանի հասարակության պահանջմունքներին և իրական հնարավորություններին ու հիմնվեն դրանց վրա:

10. Զինված ուժերում հանցավորության դեմ պայքարի քաղաքականության հիմնական ելակետային դրույթներից է օրինականության սկզբունքը, որին համապատասխան բարձր, միջին և ստորին հրամանատարական կազմի և շարքային զինվորների կողմից պարտավոր են պահպանել ՀՀ Սահմանադրությունը, օրենքները և ենթաօրենսդրական ակտերը: Օրինականության սկզբունքը նշանակում է, որ հիշատակված բոլոր սուբյեկտները պետք է ճանաչեն իրավունքի գերակայությունը, ենթարկվեն դրան, չշրջանցեն վերջինիս պատվիրանները և քաղաքական, իրավական ու բարոյական պատասխանատվություն կրեն պետության ու ժողովրդի առջև իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

ա) Մենագրություններ

1. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործությունների բնութագրական հատկանիշները, դրանց ընդհանուր և հատուկ կանխարգելման հիմնախնդիրները»: Երևան,Միվա-պրես, 2021, 160 էջ:
2. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագրական հատկանիշների քննական վերլուծություն»: Երևան, Եվրո պրինտ, 2021, 186 էջ:
3. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը»: Երևան, Եվրոպրինտ, 2018, 80 էջ:
4.**Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործությունների կրիմինալոգիական ասպեկտները»: Երևան. Եվրոպրինտ, 2018, 88 էջ:

բ) Գիտական հոդվածներ

5. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործություն հասկացությունը, էությունը և տեսակները»// «Օրինականություն», №109, 2019, էջ 13-16:
6. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործությունների ընդհանուր կանխարգելման հիմնախնդիրները»// «Օրինականություն», №123, 2021, էջ 64-68,79:
7. **Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործողությունների կանխագելման հատուկ (անհատական) միջոցները»:// «Օրինականություն» №124,2021, էջ 64-71:
8. **Նահապետյան Լեոնիդ՝** «Հանցանք կատարած զինծառայողների քրեագիտական և սոցիալ-հոգեբանական առումները»//«Օրինականություն», №125, 2021, էջ 55-59:
9.**Նահապետյան Լեոնիդ՝** «Զինվորական հանցագործողությունների քրեաիրավական բնութագիրը»// «Օրինականություն» №127, 2022, էջ 61-65:

НАГАПЕТЯН ЛЕОНИД АЛЬБЕРТОВИЧ
УГОЛОВНО-ПРАВОВЫЕ И КРИМИНОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ВОИНСКИХ ПРЕСТУПЛЕНИЙ СОПРЯЖЕННЫХ С НАСИЛИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
РЕЗЮМЕ

Актуальность темы диссертационного исследования. Правовые реформы, осуществляемые в Республике Армения, предполагают, в числе других проблем, также фундаментальные преобразования в Вооруженных силах Республики Армения, направленные на укрепление воинской дисциплины, устранения правонарушений и повышения боеспособности военнослужащих.

Актуальность темы исследования заключается в том, что сопряженные с насилием воинские преступления в структуре преступлений, совершаемых в Вооруженных силах РА, проявляются с большей жестокостью, нарушая не только порядок военной службы, уставные отношения, но и наносят существенный ущерб системе безопасности страны, боеспособности армии, морально-психологического состояния военного состава. Следовательно, актуальность темы также обусловлена исключительной важностью вопросов, касающихся борьбы с ними и требующих безотлагательного решения данных проблем.

Насильственные преступления, к сожалению, являются неотъемлемой частью общественного бытия. Их истоки начинаются с появлением человечества и всегда сопровождают его. Однако, это вовсе не означает, что борьба с преступностью (в том числе с преступлениями, совершаемыми в Вооруженных силах) является бессмысленным и безрезультатным занятием. Наоборот, необходимо всесторонне изучить причины и условия преступлений, связанных с насилием и принять все возможные меры по устранению этих причин и условий, а также минимизировать преступность и контролировать ее в определенных (разумных) пределах.

Проблемы раскрытия, уголовной ответственности и предотвращения преступлений, сопряженных с применением насилия в Вооруженных силах, считались и продолжают считаться приоритетными задачами науки и практики уголовного права, криминологии и уголовно-исполнительного права РА.

Актуальность научного исследования обсуждаемой проблемы обусловлена также необходимостью повышения боеспособности и дисциплины в Армянской Армии, поскольку преступления, сопряженные с насилием в вооруженных силах, направлены не только против охраняемых уголовным законом общественных отношений, но и подрывают безопасность государства и обороноспособность страны. Следовательно,

исследования, связанные с подобными воинскими преступлениями, имеют существенное практическое значение.

Научная новизна исследования заключается в том, что на основе нового Уголовного кодекса, материалов судебной и правоприменительной практики, автор систематически проанализировал характерные уголовно-правовые и криминалистические особенности воинских преступлений сопряженных с применением насилия.

Приведены равнозначные решения теоретических и прикладных задач, поставленных в исследовании. В частности, раскрыта уголовно-правовая природа воинских преступлений сопряженных с насилием, их социальные и гуманистические аспекты, всесторонне проанализированы соответствующие нормы нового Уголовного кодекса Республики Армения, положения судебных прецедентов и правовые позиции, и на основании результатов анализа разработаны теоретические обоснования и практические предложения относительно их уточнения. Кроме того, проанализированы официальные статистические данные характеризующие состояние, структуру и динамику насильственных воинских преступлений, выявлены характерные криминалистические особенности преступника, а также обозначены основные направления эффективной профилактики указанных преступлений с конкретными предложениями.

В работе обосновывается авторский подход, согласно которому, прямая или косвенная взаимосвязь причин и мотивов совершения воинских преступлений сопряженных с применением насилия, с общими криминогенными условиями других преступлений связанных с насилием распространенных по всей Республике.

Теоретическая и практическая значимость исследования заключается в том, что полученные результаты, предложения, заключения и выводы могут быть использованы для уточнения уголовного законодательства и улучшения судебной практики, предотвращения преступности в Вооруженных силах РА, а также в научно-педагогической деятельности при изучении дисциплин “Уголовное право” и “Криминология”.

Leonid Albert Nahapetyan

CRIMINAL-LEGAL AND CRIMINOLOGICAL PROBLEMS OF MILITARY CRIMINAL OFFENSES COMBINED WITH VIOLENCE IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The relevance of the research topic. The legal reforms carried out in the Republic of Armenia imply, among other problems, a radical transformation also in the Armed Forces of the Republic of Armenia, in the direction of strengthening military discipline, eliminating offenses and increasing the combat capability of serviceman.

The relevance of the research topic lies in the fact, that military criminal offenses combined with violence in the structure of crimes committed in the RA armed forces, are manifested in the most brutal manner, violating not only the order of military service, statutory relations, but also cause significant damage to the country's security system, the combat capability of the army, the morale and psychological atmosphere of the military personnel. Consequently, the relevance of the topic is also due to the exceptional importance of issues related to the fight against them and requiring urgent solutions to these problems.

Crimes related to violence, unfortunately, are an integral part of social life. Its origins begin with the emergence of humanity and always follow it. However, this does not mean at all, that the fight against crime (including crimes committed in Armed Forces) is meaningless and fruitless work. Instead, it is necessary to comprehensively study the causes and conditions of violent crimes and implement all possible measures to eliminate these causes and conditions, as well as to minimize crime and control it within certain (reasonable) limits.

The problems of detection, criminal liability and prevention of violent crimes in the armed forces were considered and continue to be considered among the primary problems of the science and practice of Criminal Law, Criminology and Penal Enforcement Law of the Republic of Armenia.

The relevance of the scientific study of the discussed problem is also due to the need to increase the combat capability and discipline in the Armenian army, since crimes accompanied by violence in the Armed Forces are directed not only against public relations protected by criminal law, but also undermine the security of the state and the defense of the country, therefore, studies related to such war crimes have significant practical and applied significance.

The scientific novelty of the research lies in the fact that, based on the materials of the new Criminal Code, judicial and law-enforcement practice, the author systematically analyzed the criminal-legal and criminological characteristics of military criminal offenses combined with violence. Appropriate solutions to the theoretical and applied problems presented in the research are given. In particular, the criminal-legal nature of military criminal offenses combined with violence, their social and humanistic aspects are disclosed. The relevant norms of the new Criminal Code of the Republic of Armenia and the provisions of judicial precedents and legal positions are also comprehensively analyzed. Moreover, based on the results of the analysis, theoretical justifications and practical proposals for their clarification are developed. The official statistical data characterizing the state, structure and dynamics (trend) of violent military criminal offenses were analyzed. Also, criminological features of the criminal are identified, and the main directions of effective prevention of specified crimes with specific proposals are also outlined.The dissertation substantiates the author's approach, according to which the direct or indirect relationship of the causes and motives for committing military criminal offenses combined with violence, with the general criminogenic conditions of other crimes associated with violence spread throughout the Republic.

The theoretical and practical significance of the research lies in the fact, that the obtained results, recommendations and conclusions can be used for the correction of criminal legislation and the improvement of judicial practice, in the prevention of crime in the armed forces of the Republic of Armenia, as well as in the course of scientific and educational activities: during the study of courses “Criminal Law” and “Criminology”.